

*Ինչպես ստուգել էլեկտրոնային  
ստորագրությունը տարբեր  
փաստաթղթերում*

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման  
Գրասենյակ ՓԲԸ  
e-Governance Infrastructure Implementation Unit CJSC

## *Բովանդակություն*


---

1. Էլեկտրոնային ստորագրության ստուգումը MS Office փաստաթղթերում.....	3
1.1 Ստորագրության վավերացումը MS Office փաստաթղթերում .....	7
2. Էլեկտրոնային ստորագրության վավերականությունը PDF փաստաթղթերում .....	10
3. Էլեկտրոնային Ստորագրության ստուգումը ARX Cosign համակարգում.....	11




## 1. Էլեկտրոնային ստորագրության ստուգումը MS Office փաստաթղթերում

MS office Փաստաթղթում էլ ստորագրությունն երևում է **Էլեկտրոնային կնիքի** տեսքով՝ էջի ներքևի հատվածում:




Փաստաթուղթը ստորագրելուց հետո **աջ մասում** հայտնվում է ստորագրումը հաստատող **Signatures** պատուհանը, որտեղ **Signature Details** ենթամենյուն ցույց է տալիս ստորագրող անձի տվյալները, իսկ **Remove Signature** ենթամենյուն հեռացնում է ստորագրությունը փաստաթղթից:


Տվյալ պատուհանը տեսանելի է դառնում նաև էջի ստորին հատվածի **Էլ.կնիքի** վրա 1 անգամ սեղմելով:




Էլեկտրոնային ստորագրության վավերականությունը ստուգելու համար անհրաժեշտ է սեղմել **Էլեկտրոնային կնիքի վրա** և աջ մասում բացված **Signatures** հատվածում մկնիկի աջ սեղմակով սեղմել **Signature Details** տողի վրա:



**Ուշադրություն.** Վավեր է էլեկտրոնային ստորագրության այն հավաստագիրը, որը տրված է ՀՀ Հավաստագրման Կենտրոնի կողմից:



Հավաստագրի մանրամասն տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել **View** կոճակի վրա, որից հետո բացվում է **Certificate** պատուհանը:




**General** հատվածում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ տողերին.

**Issued to:** Ում է տրված – ստորագրող անձի անուն/ազգանուն անգլերենով և հանրային ծառայության համարանիշը:

**Issued by:** Ում կողմից է տրված – ՀՀ Հավաստագրման Կենտրոն:

**Valid from** – վավերականության ժամկետ – 10 տարի վավերականության ժամկետ:

**Details** բաժնում ներկայացվում են հավաստագրի սերիալ համարը, կիրառվող ալգորիթմը և այլն:



*Certification Path* բաժնում երևում է հավաստագրի ուղին:

**Նշում՝** 2003 Office փաստաթղթերում էլեկտրոնային կնիքը բացակայում է: Փաստաթղթում ստորագրող անձի տվյալներն արտահայտվում են փաստաթուղթը ստորագրելուց հետո վերաբացելով:

**Ստորագրության գրաֆիկական կամ որևէ այլ տեսք/ձևը որևէ իրավական հիմք չի կարող հանդիսանալ վավերականության ստուգման համար: Վավերականությունը տեսնելու համար անհրաժեշտ է կողմնորոշվել միմիայն հավաստագրով:**

## 1.1 Ստորագրության վավերացումը MS Office փաստաթղթերում

MS Office ֆայլերը ստորագրելուց հետո ստորագրությունը վավեր տեսնելու համար անհրաժեշտ է [www.ekeng.am](http://www.ekeng.am) կայքից բեռնել հանրային հավաստագրերը (**CitizenCA** և **NationalRootCA**) և տեղադրել համակարգչում:

Հավաստագրերը 4 են, որոնք գտնվում են էլեկտրոնային ստորագրության էջում -> ID քարտ & Էլ-ստորագրություն->Հանրային Հավաստագրեր (2012, 2013 թողարկումներ):

4 հավաստագրերը բեռնելուց հետո մկնիկի աջ կոճակով սեղմել **CitizenCA** հավաստագրի վրա և սեղմել **Install Certificate**, այնուհետև սեղմել **Open**


Բացված պատուհանում սեղմել **Next>**



Նշել **Place all certificates in the following store**, որից հետո սեղմել **Browse**



Բացված ցանկից ընտրել **Trusted Root Certification Authorities** և սեղմել **OK**



Սեղմել **Next>** և **Finish**





Բացված պատուհանում սեղմել **OK**


Քայլերի միևնույն հաջորդականությամբ անհրաժեշտ է տեղադրել նաև **NationalRootCA** հավաստագիրը:

Հավաստագրերը տեղադրելուց հետո, փաստաթղթի ստորագրությունը կունենա հետևյալ տեսքը




## 2. Էլեկտրոնային ստորագրության վավերականությունը PDF փաստաթղթերում

Pdf. Փաստաթղթերում էլ. Ստորագրության ստուգումը կատարելու համար անհրաժեշտ է սեղմել **Signature Panel** հատվածում:



**Signature panel** հատվածը սեղմելով երևում է ստորագրող անձի տվյալները: Նշվածը սեղմելուց հետո, ցուցադրվում է էլ. Ստորագրության մանրամասները:




Էլ ստորագրության մանրամասները կարող եք տեսնել նաև ստորագրության աջ ենթամենյուից **Show signature properties**, այնուհետ **show certificate** տարբերակը ընտրելով, որտեղ արտահայտվում են էլեկտրոնային հավաստագրի ժամկետները և թողարկման տվյալները:

### 3. Հլեկտրոնային Ստորագրության ստուգումը ARX Cosign համակարգում

**ARX Cosign** ծրագրով ստորագրված ֆայլում էլ-ստորագրությունը վավերականացնելու համար անհրաժեշտ է տեղադրել **ARX Cosign Verifier** ծրագրային բաղադրիչը ([http://www.ekeng.am/?page\\_id=73&lang=hy](http://www.ekeng.am/?page_id=73&lang=hy) հղումից)

**MS Office Word** և **MS Office Excel** ֆայլերում **ARX CoSign** վավեր ստորագրությունը պետք է երևա հետևյալ տեսքով՝

ԷԿԵՆԳ թեստային տարբերակ  
Aug 6 2014 5:03 PM



Ստորագրության վավերականությունը տեսնելու համար անհրաժեշտ է մկնիկի աջ սեղմակով սեղմել ստորագրության վրա և սեղմել **Details** տողի վրա:

Բացված պատուհանում **Issued By** տողում պետք է լինի **ՀՀ Կառավարություն**

**View Certificate** կոճակի վրա սեղմելով կարելի է տեսնել ավելի մանրամասն տվյալներ:

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ  
ՓԲԸ

e-Governance Infrastructure Implementation Unit CJSC

